ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 դեկտեմբերի 2011 թվական N 184-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 25-ի N 59-Ն որոշման 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 6-ին թիվ 01/15/7795-11 հանձնարարականը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Մ.Եղիազարյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Ս.Գրիգորյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ, անասնաբուժասանիտարիայի սննդի անվտանգության և բուսաբուծության ծառայությունների մարզային կենտրոնի պետ /համաձայնությամբ/

Վ.Դավթյան - անդամ, վիճակագրական մարզային գործակալության պետ /համաձայնությամբ/

Ա.Հարությունյան - անդամ,Հրազդանի տարածքային վիճակագրական գործակալության պետ /համաձայնությամբ/

Կ.Իսահակյան - անդամ, Աբովյանի տարածքային վիճակագրական գործակալության պետ /համաձայնությամբ/

Կ.Ավագյան - անդամ,Նաիրիի տարածքային վիճակագրական գործակալության պետ /համաձայնությամբ/

2. Առաջարկել՝

1/ Համայնքների ղեկավարներին՝ տեղերում ստեղծել հանձնաժողովներ և անձնական պատասխանատվությամբ ապահովել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը և հաշվետվությունները տարածքային վիճակագրական համապատասխան վարչությանը սահմանված ժամկետում առաքումը:

2/ Մարզային վիճակագրական վարչությանը՝/ պետ Վ.Դավթյան /համայնքներին ապահովել անասնագլխաքանակի հաշվառման համար անհրաժեշտ քանակի հաշվետվության ձևերով, տրամադրել համապատասխան մեթոդական ցուցումներ և ամփոփ տվյալները սահմանված ժամկետում ներկայացնել վերադաս կազմակերպություններին:

3.Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին:

4.Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ղազարյանի վրա:

5.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ